Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու /9 դասաժամ/, դասվար /14 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ կողմից մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում / ձև 1 / , մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ
- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն /Ձև 5/
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր /առկայության դեպքում /,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել /0312/ 6-42-91: